«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
Հայ-Ռուսական համալսարանի
գիտության գծով պրոռեկտոր,
փ. գ. դ., պրոֆեսոր
Պ. Ս. Ավետիսյան

«20» մայիսի 2022 թ.

ԿԱՐԾԻՔ

Դավիթ Գագիկի Վարդանյանի «Համախառն ներքին խնայողությունների և տնտեսական աճի միջև փոխկապվածության գնահատումը Հայաստանի Հանրապետությունում» թեմայով Ը.00.03 – «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունը քննարկվել է Հայ-Ռուսական համալսարանի «Էկոնոմիկայի և ֆինանսների» ու «Տնտեսագիտության տեսության և անցումային շրջանի տնտեսության հիմնախնդիրների» ամբիոնների 2022 թվականի մայիսի 20-ի համատեղ նիստում (արձանագրություն թիվ 06-22):

Մասնակցում էին՝
Սանդոյան Էդվարդ Մարտինի՝ տնտեսագիտ. դոկտոր, պրոֆ., **Ներսեսյան Կարեն Վասիլիի՝** տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Ոսկանյան Մարիամ Համբարձումի՝** տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, «Էկոնոմիկայի և ֆինանսների» ամբիոնի վարիչ, **Զախոյան Էլիզա Միքայելի՝** տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Կարապետյան Էդգար Գագիկի՝** տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Պետրոսյան Իրինա Բորիսի՝** տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, «Տնտեսագիտության տեսության և անցումային շրջանի տնտեսության հիմնախնդիրների» ամբիոնի վարիչ, **Ավետիսյան Անի Գրիգորի՝** տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Սարգսյան Ռուզաննա Աշոտի՝** տնտեսագիտ. թեկնածու, *ավագ դասախոս*, ***Տիգրանյան Վարսիկ Իշխանի,*** *տնտեսագիտ. թեկնածու*, դոցենտ, **Մնացականյան Լիդա Արմենի՝** տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, **Հակոբյան Էսթեր Աշոտի՝** տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, **Հակոբյան Արմինե Արզումանի՝** ավագ դասախոս, **Ավետիսյան Լարիսա Աշոտի՝** տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, **Աղաջանյան Արմինե Վլադիմիրի՝** տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Գալստյան Անի Համլետի՝** տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, **Պետրոսյան Գարիկ Արմենակի՝** տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, **Պետրոսյան Հեղինե Գագիկի՝** տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս **Նաշիկյան Լիլիա Աշոտի՝** դասախոս, **Սարգսյան Լիլիթ Կարենի՝** դասախոս, Կարապետյան Անուշ Արմենի, *ասիստենտ*, :

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը նվիրված է ՀՀ տնտեսության կարևոր, տնտեսական տևական կայուն աճի ապահովման համար անհրաժեշտ ներդրումների ֆինանսավորման ներքին աղբյուրների՝ համախառն խնայողությունների ձևավորման հիմնախնդրին: Հեղինակի ընտրած հետազոտության թեմայի կարևորությունը պայմանավորված է ներկայումս՝ պարտքով բարեկեցություն ապահովելուն կողմնորոշված տնտեսական աճի մոդելի քննադատական վերագնահատմամբ, որը, նախ զարգացած երկրներում, ապա համաշխարհային մասշտաբով, հանգեցրել է 2008 թվականի ֆինանսական ճգնաժամին: Աշխատանքում քննարկված հիմնախնդիրներն արտացոլում են տնտեսագիտության տեսության մեջ ամբողջական պահանջարկի խթանման և ներքին խնայողությունների բավարար մակարդակի ապահովման միջև օպտիմալ հաշվեկշռի որոնումը, ինչով կապահովվի տնտեսության տևական կայուն աճի համար կապիտալի կուտակման անհրաժեշտ մակարդակը:

2009 թվականի տնտեսական անկումից ի վեր, ՀՀ-ում ձևավորվել են օտարերկրյա ուղղակի ներդրումների խիստ նվազման միտումներ, որոնք ավելի խորացան COVID-19-ի ազդեցությամբ: Ներդրումների համաշխարհային հոսքերի նշանակալի անկումը բարձրացրել է ազգային տնտեսության ֆինանսավորման արտաքին աղբյուրների հետ կապված ռիսկերը: Միաժամանակ, տևական ժամանակ ՀՀ-ում ներքին ներդրումների ֆինանսավորման ներքին աղբյուր հանդիսացող համախառն խնայողությունները պահպանվել են համաշխարհային միջին մակարդակից նշանակալի ցածր մակարդակում, ինչը զսպում է երկրի տնտեսական տևական աճի ապահովման գրավական հանդիսացող տեխնոլոգիական առաջընթացի համար անհրաժեշտ հիմնական կապիտալի կուտակումը:

Ներքին խնայողությունների ձևավորման վրա ազդող գործոնների կատարված վերլուծությունը կարևոր և արդիական է: Այդ գործոնները հաշվի առնելը պետության տնտեսական արդյունավետ քաղաքականության, այդ թվում՝ հարկաբյուջետային և դրամավարկային բնագավառներում, ձևավորման անհրաժեշտ պայման է:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսությունը կառուցված է այնպես, որ, հետևողականորեն վեր հանելով խնայողությունների և տնտեսական աճի՝ հետազոտվող գործոնների պատճառահետևանքային կապերը և փոխազդեցությունը, հնարավոր է դառնում բացահայտել պակաս հետազոտված արդիական, աշխատանքի թեմային առնչվող նշանակալի հիմնախնդիրները: Հետազոտության ընթացքում հեղինակը լուծում է հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրում է ներքին ներդրումների ֆինանսավորման արտաքին աղբյուրների սահմանափակումները և ռիսկերը, ներքին խնայողություններով ներքին ներդրումների ապահովման միջազգային փորձը.
- բացահայտում է համախառն ազգային խնայողությունների, համախառն ներքին խնայողությունների և զուտ ազգային խնայողությունների ձևավորման միտումները և օրինաչափությունները,
- ուսումնասիրում է համախառն ազգային խնայողությունների կառուցվածքը, մասնավոր և պետական խնայողությունների փոխկապվածությունը՝ «Բարրո-Ռիկարդոյի համարժեքություն» վարկածի համատեքստում.
- գնահատում է համախառն ազգային խնայողություններով ներքին ներդրումների ապահովվածության աստիճանը և «խնայողություններ-ներդրումներ» ռեսուրսային ճեղքվածքի վրա օտարերկրյա ուղղակի ներդրումների ազդեցության չափը.
- ուսումնասիրում է Ջ. Քեյնսի և Ռ. Սոլոուի վարկածները՝ ՀՀ համախառն խնայողությունների և տնտեսական աճի դինամիկայի միջև փոխկապվածությունը բացատրելու համար,
- բացահայտում է համախառն ազգային խնայողությունների, համախառն ներքին խնայողությունների և զուտ ազգային խնայողությունների վրա ավելի մեծ ազդեցություն ունեցած մակրոտնտեսական գործոնները.
- ուսումնասիրում է խնայողությունների խթանման հարկաբյուջետային և դրամավարկային գործիքների շրջանակը,
- ուսումնասիրում է ՀՀ ֆինանսական զարգացման վիճակը և դրա հետ կապված խնայողությունների համախմբման և ներդրումների փոխակերպման խնդիրները,
- մշակում էլ հայեցակարգային մոտեցումներ՝ օտարերկրյա ներդրողների մասնակցությամբ սահմանային տեխնոլոգիաների ներդրման և արտահանմանը կողմնորոշված ներդրումային նախագծերում ներքին խնայողությունների ներգրավման խթանման համար.
- տնային տնտեսությունների խնայողությունների մակարդակի բարձրացման նպատակով՝ մշակում է մեթոդական մոտեցումներ՝ տնային տնտեսությունների ներգրավվածությունը խնայողական գործընթացներում խթանելու համար:

ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսության մեջ առաջադրված խնդիրների լուծման նպատակով իրականացված վերլուծությունների ու հետազոտությունների արդյունքում ստացվել են տեսական և գործնական նշանակություն ունեցող մի շարք արդյունքներ, որոնցից ըստ հեղինակի գիտական նորույթն արտացոլող հիմնական դրույթներն են.

1. 1993-2020 թթ. ժամանակային շարքերի տվյալների հիման վրա, կոռելյացիոն-ռեգրեսիոն մեթոդի օգտագործմամբ, ուսումնասիրվել է համախառն ազգային

խնայողությունների միջև ռեսուրսային ճեղքվածքի և ՕՈՒՆ-ի զուտ ներհոսքի փոխկապվածությունը, գնբահատվել ՕՈՒՆ-ի ազդեցությունը ռեսուրսային ճեղքվածքի վրա, ինչը հեղինակին հնարավորություն է ընձեռել բացահայտելու արտաքին աղբյուրների հաշվին ՀՀ ներքին ներդրումների ֆինանսավորման աստիճանը:

2. Խնայողությունների և տնտեսական աճի դինամիկայի միջև կապը բացատրելու համար, հեղինակը, դիտարկելով Քեյնսի և Սոլոուի վարկածները, պատճառականության Գրեյնջերի թեստի միջոցով բացահայտել է, որ ՀՀ տնտեսության առնչությամբ հաստատվում է Սոլոուի վարկածը, ըստ որի՝ ներքին խնայողությունները տնտեսական աճի պատճառ են:
3. Ուշագրավ է հեղինակի մշակած, զուտ ազգային խնայողությունների ճշգրտման մեթոդական մոտեցումը, որը հաշվի է առնում բնական ակտիվների սպառումը և ներդրումները մարդկային կապիտալում և որը, իրապես, կարող է կիրառվել որպես տնտեսական աճի որակը բնութագրող ցուցիչ:
4. ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրով երկրի տնտեսական բարդության աստիճանի բարձրացման նպատակադրման տեսանկյունից, անկասկած, գործնական հետաքրքրություն է ներկայացնում, ԱՄՆ Տնտեսական հետազոտությունների ազգային բյուրոյի (NBER), Հարվարդի և Բրաունի համալսարանների հետազոտողների մշակումների հիման վրա, հեղինակի առաջարկած՝ սահմանային տեխնոլոգիաների ներդրման նախագծերի ֆինանսավորման նպատակով ներքին և օտարերկրյա ուղղակի ներդրումների արտահանման հարթակի հայեցակարգը, որը ենթադրում է պետական սուբսիդավորում՝ ներքին խնայողությունները համախմբելու և դիսկոնտավորված (ծովային ելքի բացակայության գործոնով) արդյունավետ հարկային դրույքաչափերի կիրառում՝ օտարերկրյա ներդրողներին խրախուսելու համար:
5. Ինքնուրույն գիտագործնական նշանակություն ունի խնայողական գործընթացներում տնային տնտեսությունների ներառականության աստիճանի բարձրացման և «երկար փողերի» ինստիտուտի զարգացման, հեղինակի առաջարկած մոտեցումը: Հիմնվելով հեղինակավոր հետազոտողների մշակումների վրա, որոնցով ապացուցվել է, թե ինստիտուցիոնալ կառույցների քաղաքականության փոփոխությունն ինչպես կարող է ազդել համախառն ազգային խնայողությունների կարևոր բաղադրիչ հանդիսացող տնային տնտեսությունների հատվածի խնայողությունների վրա, ինչպես նաև նկատի ունենալով խնայողական գործընթացներում ներառականության բարձր աստիճանի ապահովմանը միտված միջազգային պրակտիկայում գոյություն ունեցող սխեմաները, մշակվել են հարկաբյուջետային գործիքներով խնայողությունների խթանման մեթոդական դրույթներ, որոնք ենթադրում են՝ ա) անցում ըստ վճարունակության հարկման համակարգին, բ) նորածին երեխաների համար անհատական խնայողական-ներդրումային հաշիվների ստեղծում՝ դրանցում կատարելով կուտակումներ բնական պաշար-

ների օգտագործման և շրջակա միջավայրի պահպանման համար վճարներից ստացվող պետական եկամուտներից մասհանումների հաշվին և «պետություն-մասնավոր հատված» գործընկերության հիման վրա:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ և ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ:

Կատարված հետազոտության արդյունքների տեսական նշանակությունը կայանում է նրանում, որ աշխատանքում ձևակերպված դրույթները, եզրակացությունները հանդիսանում են որոշակի ներդրում խնայողությունների և դրանցով ներքին ներդրումների ֆինանսավորման տեսության զարգացման մեջ:

Հետազոտության կիրառական նշանակությունը նրանում է, որ խնայողական գործընթացներում ներառականության ապահովմանն առնչվող հեղինակի առաջարկած մեթոդական մոտեցումները կարող են դիտարկվել որպես արդյունավետ մեխանիզմի ձևավորման քայլեր՝ ՀՀ Կառավարության 2021-2026 թթ. ծրագրում (Ծրագիր) ամրագրված հետևյալ դրույթով նախատեսված տնտեսական քաղաքականության իրականացման համար. «Տնտեսական աճի ներառականությունն ապահովվելու է յուրաքանչյուր անձի ներուժի զարգացման, ինչպես նաև տնտեսական հնարավորությունների և դրանց հասանելիության ընդլայնման միջոցով» (Ծրագիր, էջ 22): Նույնը վերաբերում է երկրի տնտեսական բարդության աստիճանի բարձրացմանն առնչվող, հեղինակի մշակած հայեցակարգին: Նշվածը, ինչպես նաև խնայողությունների դրամավարկային և հարկաբյուջետային խթանման վերաբերյալ դրույթները (էջ 132-145) կարող են օգտագործվել պետական կառավարման մարմինների ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

Ատենախոսական հետազոտությամբ ստացված արդյունքները և մոդելները կարող են օգտագործվել գիտաուսումնական և գործնական նպատակներով:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ներածությունն արտացոլում է ատենախոսական հետազոտության արդիականությունը, հիմնախնդրի մշակվածության աստիճանը, նպատակը, խնդիրները, հետազոտության բնագավառը, գիտական նորույթը, ստացված արդյունքների տեսական և կիրառական նշանակությունը, տեղեկություններ աշխատանքի փորձարկման մասին:

Առաջին գլխում հեղինակը բացահայտում է ներքին խնայողությունների, որպես տնտեսական աճի և զարգացման որոշիչ գործոնի, նշանակությունը: Գրականության ընդարձակ ակնարկի միջոցով ներկայացվում է տնտեսության մեջ խնայողությունների դերի վերաբերյալ պատկերացումների էվոլյուցիան, անդրադարձ է կատարվում ներքին խնայողությունների, ներդրումների և տնտեսական աճի փոխկապվածությանը, քննարկվում են ներքին

ներդրումների ֆինանսավորման արտաքին աղբյուրների հետ կապված ռիսկերին և սահմանափակումներին վերաբերող հարցեր: Մասնավորապես, հեղինակը մանրազնին քննարկում ՀՀ ՕՈՒՆ-ի ներհոսքի, արտաքին աղբյուրներից պետական պարտքի ֆինանսավորման, ստացվող անհատական տրանսֆերտներին առնչվող հիմնախնդիրները և հիմնավորում հետևյալ եզրակացությունները.

1) ՕՈՒՆ-ի համաշխարհային միտումները խոստումնալից չեն կարող լինել ՀՀ նման երկրների համար՝ որպես ներքին ներդրումների ֆինանսավորման որոշիչ աղբյուր, կապված մեծացած ռիսկերի և սահմանափակումների հետ.

2) աշխարհաքաղաքական վերադասավորումները և համաշխարհային ֆինանսական ոչ բարենպաստ զարգացումները, որոշակի ռիսկեր են պարունակում, կապված պետական, մասնավորապես, Կառավարության պարտքի ֆինանսավորման արտաքին աղբյուրների հետ.

3) ներքին ներդրումների համար արտաքին ֆինանսավորման աղբյուր հանդիսացող անձնական ստացվող տրանսֆերտները դրսևորել են խիստ անկման միտումներ:

Ընդհանրացնելով նշվածը, հեղինակը գտնում է, որ ներքին ներդրումների ֆինանսավորման արտաքին աղբյուրների հետ կապված ռիսկերը և սահմանափակումները կարող են խնդիրներ առաջացնել ՀՀ հետագա տնտեսական աճի համար:

Հատուկ ուշադրության է արժանի ներքին խնայողություններով ներդրումների ֆինանսավորման համաշխարահային փորձառության ակնարկը՝ տասնամյակներ շարունակ տևական կայուն աճ ցուցաբերած ասիական երկրների օրինակով: Ասիական մի շարք երկրներ ներդրումների բարձր և կայուն մակարդակի են հասել հիմնականում ներքին խնայողություններով դրանց ֆինանսավորման միջոցով, թեպետ արտաքին ֆինանսավորումը եղել է կարևոր հավելում: Այս առումով, հեղինակը, որպես հարցի քննարկման ելակետ է ընդունում այն, որ ներքին ներդումներում արտաքին ֆինանսավորման դոմինանտ լինելը կարող է հանգեցնել երկրի ֆինանսատնտեսական անկախության մակարդակի նվազեցմանը՝ դրանից բխող քաղաքական, տնտեսական, սոցիալական և բնապահպանական հետևանքներով հանդերձ: Ըստ հեղինակի դիտարկման, դա կարող է դրսևորվել, մասնավորապես, երկրի տեխնոլոգիական առաջընթացը զսպելու ձևով, ինչը տեղի է ունենում, երբ օտարերկրյա ներդրումների ներհոսքի գլխավոր շարժառիթ են հանդիսանում գրավիչ ռեսուրսները (բնական ռեսուրսներ, էժան աշխատուժ): Սույն դիտարկումը կարող է համարվել հիմնավոր:

Առաջին գլխում ներկայացված հարցերի քննարկմամբ, ակնհայտ է դառնում ներքին խնայողությունների՝ որպես երկրի ներդրումային ներուժի մեծացման, հետևաբար՝ տնտեսական կայուն աճի ապահովման աղբյուրի կարևորությունն ու նշանակությունը:

Երկրորդ գլխում հեղինակը վերլուծել է համախառն ազգային խնայողությունների կառուցվածքը, ներկայացրել է դրանց ձևավորման միտումները և գնահատել ներքին խնա-

յողություններով ներդրումների ֆինանսավորման ապահովվածության աստիճանը, ուսումնասիրել է փոխկապվածությունները խնայողությունների և տնտեսական աճի միջև, գնահատվել է մի շարք գործոնների ազդեցություն խնայողությունների մակարդակի վրա, քննարկվել են ՀՀ-ում ֆինանսական զարգացման վիճակը և այդ համատեքստում՝ խնայողությունների մոբիլիզացման հիմնախնդիրները:

Ուսումնասիրելով երկրների տարբեր խմբերի տվյալները, հեղինակն ուշադրություն է դարձնում խնայողությունների և ներդրումների խիստ փոխկապվածության վրա, բացահայտում, որ ՀՀ-ում ներդրումների ցածր մակարդակը պայմանավորված է համախառն ազգային խնայողությունների ցածր մակարդակով, որը հետազոտվող ժամանակահատվածում կազմել է ՀՆԱ-ի նկատմամբ միջինը 12.1%, այսինքն 2 անգամ պակաս աշխարհի և տարածաշրջանի միջին ցուցանիշից: Համախառն ազգային խնայողությունների և հիմնական կապիտալի համախառն կուտական տվյալների համադրմամբ, բացահայտվում է «խնայողություններ-ներդրումներ» ռեսուրսային ճեղքվածքը, այնուհետև, կոռելյացիոն-ռեգրեսիոն վերլուծությամբ, գնահատվում ՕՈՒՆ-ի ազդեցության չափը ռեսուրսային ճեղքվածքի վրա:

Համախառն ազգային խնայողությունների կառուցվածքի ուսումնասիրությամբ բացահայտվում են պետական, մասնավոր կորպորատիվ և տնային տնտեսությունների հատվածների խնայողությունների մասնաբաժինները: Ընդ որում, ուշագրավ է, որ տնային տնտեսությունների խնայողությունների մակարդակը վերջին երկու տասնամյակում եղել է բացասական, բացառությամբ 2005-2008 թթ.: Ուսումնասիրությամբ բացահայտվում է նաև, որ ՀՀ տնային տնտեսությունների խնայողական վարքագիծը տարբերվում է ՏՀԶԿ երկրներում արձանագրված վարքագծից. ճգնաժամերի ժամանակահատվածում ՀՀ-ում տնային տնտեսությունների խնայողությունների մակարդակը նվազում է (ինչն արձանագրվել է 2008 թ. ֆինանսական ճգնաժամի և COVID-19-ի առաջացրած տնտեսական անկման ժամանակահատվածներում) մինչդեռ զարգացած երկրներում խնայողությունների մակարդակի բարձրացումն օրինաչափ է դիտվում: Տվյալ բացահայտումը կարող է հետաքրքրություն ներկայացնել երկրի տնտեսական քաղաքականությունը մշակողների համար:

Ազգային հաշիվների համակարգում չարտացոլվող համախառն ներքին խնայողություններին անդրադառնալիս, հեղինակը, բացահայտում է դրանց անհամեմատելի ցածր մակարդակը (1991-2020 թթ.միջինը՝ ՀՆԱ-ի 1%) աշխարհի (26.4%), Եվրոպայի և կենտրոնական Ասիայի (26.9%), միջինից բարձր եկամտով երկրների (34.5%) միջին ցուցանիշի համեմատ: Հեղինակը, նկատի ունենալով խնայողությունների այս տեսակի հաշվարկման մեթոդը, որը բխում է ՀՆԱ-ի հաշվարկման մեթոդից, բացահայտում է այդ փոփոխականի և տնտեսական աճի միջև փոխազդեցության ուղղությունը՝ Գրեյնջերի թեստի կիրառմամբ (էջ 71-85):

Տնտեսական աճի որակի տեսանկյունից, հեղինակը կարևորում է զուտ խնայողությունները և առաջարկում դրա առավելագույն ճշգրտված ցուցանիշն օգտագործել որպես տնտեսական աճի որակական ցուցիչ:

Աշխատանքում ուսումնասիրվում է ՀՀ ֆինանսական զարգացման վիճակը և, իրավացիորեն, եզրակացվում, որ հատկապես ֆինանսական շուկաների թերզարգացած լինելը հնարավորություն չի ընձեռում մոբիլիզացնելու ներքին խնայողությունները և դրանք ուղղորդելու տնտեսության իրական հատվածի զարգացմանը, ինչն էլ պայմանավորել է այլ մոտեցումների մշակման անհրաժեշտությունը:

Երրորդ գլուխը նվիրված է ՀՀ տնտեսական կայուն և տևական աճի ապահովման նպատակով համախառն ներքին խնայողությունների մակարդակի բարձրացման հանրային քաղաքականության հնարավոր մոտեցումների վերաբերյալ առաջարկություններին, որոնց հիմքում Համաշխարհային բանկի Աճի և զարգացման հանձնաժողովի կողմից հինգ կատեգորայի բաժանված, հետազոտվող քաղաքականություններն են. կուտակում, ինովացիաներ, տեղաբաշխում, կայունացում և ներառականություն:

Գործնական հետաքրքրություն է ներկայացնում ներքին խնայողությունների հաշվին ֆինանսավորվող ներքին ներդրումների և ՕՈՒՆ-ի զուգորդմամբ՝ սահմանային տեխնոլոգիաների ներդրման հայեցակարգը՝ միտված ՀՀ կառավարության 2021-2026 թթ. ծրագրով սահմանված երկրի տնտեսական բարդության աստիճանի բարձրացմանը, այդպիսով՝ տնտեսական տևական կայուն աճ ապահովելուն: Օտարերկրյա ներդրողների հարկային խթանները՝ հիմնված արդյունավետ հարկման դիսկոնտավորված դրույքաչափերի կիրառման մոտեցումը՝ սահմանային տեխնոլոգիաների ներդրման նախագծերում խնայողությունների ներգրավման նպատակով Կառավարության սուբսիդավորումով հանդերձ, կարող է համարվել հիմնավորված՝ նկատի ունենալով, որ հեղինակը որպես հիմք է ընդունել ԱՄՆ Տնտեսական հետազոտությունների ազգային բյուրոյի (արտահանման հարթակի ՕՈՒՆ-ի հայեցակարգ), տասնամյակների փորձառություն անցած հայեցակարգը, Հարվարդի և Բրաունի համալսարանների մշակումները (ներքին խնայողություններով սահմանային տեխնոլոգիաների ներդրմանն առնչվող):

Աշխատանքում դիտարկվում են հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականության մի շարք գործիքներ, որոնք կարող են ազդել ազգային խնայողությունների և ներդրումների մակարդակի վրա: Մասնավորապես, հիմք ընդունելով «Բարրո-Ռիկարդոյի համարժեքության» վարկածը, ինչպես նաև հաշվի առնելով այն, որ մասնավոր հատվածի խնայողություններն ավելի մեծ ազդեցություն ունեն համախառն ազգային խնայողությունների վրա, քան պետական հատվածի խնայողությունները, նպատակահարմար չի դիտվում հարկերի բարձրացմամբ պետական եկամուտների, հետևաբար՝ խնայողությունների մակարդակի բարձրացումը: Դրամավարկային քաղաքականության առումով, հեղինակը անդրադառնում է ներքին վարկավորման, տոկոսադրույքի, փոխարժեքի և խնայողությունների փոխառնչություններին և, մասնավորապես, նշում, որ որ համախառն պահանջարկի զսպումը ներքին վարկի ընդլայնման սահմանափակումների միջոցով կարող է ազդել նաև խնայողության վրա: Վարկավորման տոկոսադրույքի առնչությամբ հեղինակը նկատում է, որ

կապիտալ ներդրումներ կատարելիս՝ մասնավոր հատվածի համար առևտրային բանկերի տրամադրած վարկերը գրավիչ չեն, ինչը, ենթադրաբար, ոչ միայն տոկոսադրույքի հետ է կապված, այլև վարկավորման այլ պայմանների: Այնուհետև եզրակացվում է, որ ավանդների ձևով խնայողությունների գործիքը, որի միջոցով գոյանում են բանկերի նշանակալի ռեսուրսները, բավարար չափով չի նպաստում մասնավոր ներդրումներին, ի վերջո, տնտեսական աճի տեմպերին: Փոխարժեքին անդրադառնալիս, հեղինակը գտնում է, որ դրամի արժևորումը հանգեցնում է մասնավոր և պետական հատվածների միջև իրական եկամուտների տեղաշարժին: Եթե մասնավորից պետական հատված այդ տեղաշարժը և հանրային սպառումը նկատելի չեն մեծանում, հավանաբար, դա կհանգեցնի համախառն ազգային խնայողությունների մակարդակի բարձրացմանը:

Խնայողական գործընթացների ներառականության ապահովման տեսանկյունից՝ գործնական հետաքրքրություն են ներկայացնում հեղինակի առաջարկած խնայողությունների ինստիտուցիոնալացումը՝ նորածին երեխաների համար անհատական խնայողական-ներդրումային հաշիվների ստեղծում և մինչև 16 տարին լրանալը, դրանցում կուտակումներ կատարելը՝ պետություն-մասնավոր հատված գործընկերության հիման վրա:

Խնայողական գործընթացների ներառականության տեսանկյունից՝ հիմնավոր կարող է դիտվել նաև ըստ վճարունակության հարկման սկզբունքին անցնելը, ինչի փաստարկներց մեկը համարվում է տևական ժամանակ տնային տնտեսությունների խնայողությունների բացասական մակարդակը, ինչը նշանակալի բացասական ազդեցություն են ունենում համախառն ազգային խնայողությունների մակարդակի վրա: Միաժամանակ, տնային տնտեսությունների խնայողական ողջամիտ վարքագծի ձևավորման առումով, կարևորվել է ֆինանսական գրագիտության նշանակությունը, ինչին հեղինակը հանգել է առցանց կատարված հարցումների արդյունքների հիման վրա:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ատենախոսությունում առկա են մի շարք թերություններ, որոնց մեջ կարևորում ենք առանձնացնել հետևյալները՝

1. Ցանկալի կլիներ, որ հեղինակը գնահատեր ՀՀ-ում սպառման սահմանային հակվածությունը (MPC), որը հնարավորություն կտար նաև խնայողությունների սահմանային հակվածության (MPS) վերաբերյալ պատկերացում կազմել և կատարել եզրահանգումներ, անել արժեքավոր առաջարկություններ:
2. Ատենախոսության 2-րդ գլխում հեղինակը կառուցել է մի շարք գծային ռեգրեսիայի հավասարումներ, որոնց միջոցով գնահատվել են խնայողությունների և այլ մակրոտնտեսական ցուցանիշների միջև կապերը: Սակայն, ստացված արդյունքները կարող են որոշ չափով շեղված լինել, քանի որ գնահատումներում

առկա են որոշ բացթողումներ: Մասնավորապես՝ գնահատված բանաձևերը միագործոն են (2.1-ը և 2.1-ը), մինչդեռ կախյալ փոփոխականների վարքագիծը պայմանավորված է նաև այլ գործոններով, որոնց ներառումը կարող էր ճշգրտել ուսումնասիրվող փոփոխականների ազդեցության գործակիցները: Բացի այդ, ըստ տեքստում ներկայացված նկարագրության որոշ հավասարումներում օգտագործվել են փոփոխականների անհամադրելի չափման միավորներ: Օրինակ, 2.3-ում (էջ 73) օգտագործվել է ՀԱԽ-ի և համախառն ներքին արդյունքի մակարդակները: Իսկ 2.4-ում կախյալ փոփոխականը՝ հիմնական կապիտալի համախառն կուտակման աճն է, մինչդեռ անկախ փոփոխականները՝ ՕՈԻՆ-ների և համախառն ազգային խնայողությունների կշիռները ՀՆԱ-ում: Ավելի ճիշտ կլիներ, եթե բոլոր ցուցանիշները վերցվեին որպես աճեր՝ անհամադրելի ժամանակային շարքերի օգտագործումից, ինչպես նաև այլ գործոնների անհարկի ազդեցությունների ներառումից խուսափելու համար (օրինակ ՀՆԱ-ի նկատմամբ կշիռը կարող է փոխվել ՀՆԱ-ի փոփոխության արդյունքում, հետևաբար, կամ բոլոր ցուցանիշները պետք է լինեն ՀՆԱ-ում կշիռներ, կամ մոդելում պետք է կիրառել ցուցնաիշների իրական աճերը): Նմանատիպ խնդիրներ կան նաև 2.5 և 2.6 մոդելներում:

3. Ատենախոսության 3.1 բաժնում հեղինակը քննարկում և հիմնավորում է օտարերկրյա ներդրողներին հարկային արտոնություններ տրամադրելու առաջարկությունը՝ ներկայացնելով դրա իրականացման մեխանիզմները և հնարավոր դրական հետևանքները: Սակայն, հարկ է նշել, որ օտարերկրյա ներդրողներին հարկային արտոնությունների տրամադրման համակարգ ՀՀ-ում գործել է 2000-ական թվականների սկզբում, որը սակայն արդյունավետ չի եղել, ինչի հետևանքով հետագայում հանվել է: Հետևաբար, առաջարկությունն ավելի հիմնավոր և արժեքավոր կլիներ, եթե ատենախոսը ներկայացներ նախկինում գործող արտոնության հիմնական խնդիրները և նոր առաջարկի հիմնական առավելությունները դրա նկատմամբ:
4. Աշխատանքի 3.2 բաժնում ատենախոսը քննարկում է հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունները ազգային խնայողությունների վրա՝ նշելով, որ պետական բյուջեի պակասուրդի փոփոխությունը փոխում է նաև ազգային խնայողությունների մակարդակը: Սակայն, վերլուծություններում հաշվի չի առնվել բյուջեի պակասուրդի ֆինանսավորման աղբյուրների արտաքին կամ ներքին լինելը: Մասնավորապես, եթե բյուջեի պակասուրդի աճը ֆինանսավորվում է արտաքին պարտքի հաշվին, ապա ազգային ներքին խնայողությունների վրա ազդեցությունն էականորեն կտարբերվի ներքին ռեսուրսների հաշվին պակասուրդի ֆինանսավորման դեպքում խնայողությունների վրա ազդեցությունից: Նույնը կարելի է ասել նաև պակասուրդի նվազման վերաբերյալ (օրինակ ծախսերի

կրճատման միջոցով), եթե նվազել է արտաքին ռեսուրսների հաշվին իրականացվող ծախսերը (վերջին տարիներին կապիտալ ծախսերի գծով առավելապես թերակատարվում են հենց արտաքին ֆինանսավորման հաշվին նախատեսված ծախսերը): Հաշվի առնելով, որ ՀՀ պետական բյուջեի պակասուրդը պատմականորեն մեծամասամբ ֆինանսավորվել է արտաքին աղբյուրների հաշվին, այս գործոնի ներառումը վերլուծության մեջ կարող էր էական փոփոխություններ մտցնել գնահատումներում և դրանց հիման վրա կատարված եզրակացություններում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նշված դիտողությունները չեն նվազեցնում հետազոտության արդյունքների տեսական և կիրառական նշանակությունը:

Դավիթ Գագիկի Վարդանյանի «Համախառն ներքին խնայողությունների և տնտեսական աճի միջև փոխկապվածության գնահատումը Հայաստանի Հանրապետությունում» թեմայով թեկնածուական ատենախոսությունը ինքնուրույն և ամբողջական հետազոտություն է:

Կատարված հետազոտությունները փորձարկվել են հեղինակի կողմից, ընդարձակ ներկայացվել են հրապարակումներում, զեկուցվել են գիտաժողովում և ստացել դրական արձագանք: Ատենախոսական աշխատանքի արդյունքներով հրապարակվել է 13 գիտական հոդված՝ երաշխավորված ՀՀ ԲՈԿ-ի կողմից: Սեղմագիրը և հեղինակի հրապարակված գիտական աշխատությունները լիարժեք արտացոլում են ատենախոսության բովանդակությունը և պաշտպանության ներկայացված հիմնական դրույթները, որոնք բնութագրում են գիտական նորույթը:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում է աշխատանքի կարևոր դրույթներն ու արդյունքները:

Այսպիսով, **Դավիթ Գագիկի Վարդանյանի «Համախառն ներքին խնայողությունների և տնտեսական աճի միջև փոխկապվածության գնահատումը Հայաստանի Հանրապետությունում»** թեմայով թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ «Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին

ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ ներկայացված Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ:

Նիստի նախագահ՝
Հայ-Ռուսական համալսարանի
«Էկոնոմիկայի և ֆինանսների» ամբիոնի պրոֆեսոր,
տնտ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր՝ **Է. Մ. Սանդոյան**

Հայ-Ռուսական համալսարանի
«Էկոնոմիկայի և ֆինանսների» ամբիոնի վարիչ,
տնտ. գիտ. դոկտոր, դոցենտ՝ **Մ. Հ. Ոսկանյան**

Հայ-Ռուսական համալսարանի
«Տնտեսագիտության տեսության
և անցումային շրջանի տնտեսության հիմնախնդիրների»
ամբիոնի վարիչ, տնտ. գիտ. թեկնածու, դոցենտ՝ **Ի. Բ. Պետրոսյան**

Հայ-Ռուսական համալսարանի
«Տնտեսագիտության տեսության
և անցումային շրջանի տնտեսության հիմնախնդիրների»
ավագ դասախոս, տնտ. գիտ. թեկնածու՝ **Գ.Ա. Պետրոսյան**

Հայ-Ռուսական համալսարանի
«Տնտեսագիտության տեսության
և անցումային շրջանի տնտեսության հիմնախնդիրների»
ավագ դասախոս, տնտ. գիտ. թեկնածու՝ **Վ.Ի. Տիգրանյան**

Հայ-Ռուսական համալսարանի
գիտական քարտուղար,
բան. գիտ. թեկնածու՝ **Ռ. Ս. Կասաբաբովա**